Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 13.02.2018թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Տ.Ղուկասյան
Շ.Իսախանյան
Ս.Զաքոյան
Գ.Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբանման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար՝ բենզինի (ռեգուլյար) ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2018 թվականի 08.02.2018թ. և 09.02.2018թ. ստացվել են հարցումներ:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ.Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ.Ղուկասյան

---------- Շ.Իսախանյան

---------- Ս.Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2

08.02.2018թ. և 09.02.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումը.

Հարցադրում N 1

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային շուկայում նավթամթերքի գները հաճախակի աննախադեպ տատանվում են, ուստի մեր կազմակերպությունը կարող է Ձեզ գնային առաջարկ ներկայացնել և մասնակցել 19.02.2018թ. մրցույթին միայն 2018 թ. առաջին եռամսյակի համար:

Առաջարկում ենք Ձեզ հրավերում կատարել փոփոխություն և մրցույթը անցկացնել միայն 2018 թ. առաջին եռամսյակի համար:

Հարցադրում N 2

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հայտարարված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով հրավերի Հավելված 7-ում ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման և վճարման ժամանակացույցերը, ապրանքի գնումը և մատակարարումը ամբողջ 2018 թ. համար է նախատեսված: Մեր կազմակերպությունը հարկ է համարում պարզաբանել, թե արդյոք հնարավորություն ունի գնային առաջարկ ներկայացնել միայն 2018 թ. առաջին եռամսյակի համար: Հաշվի առնելով վառելիքի շուկայում առկա գների անկայունությունը՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ հակառակ դեպքում մեր կազմակերպությունը հայտ չի ներկայացնի:

Պարզաբանում

2018 թվականի փետրվարի 13-ին վերը նշված ընթացակարգի վերաբերյալ հրավերում կատարվել է փոփոխություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել N ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ urbanpiu.gnumner10@gmail.com

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով